



ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ՝ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵԾՏԱԿԱՆ

Ի Պուլկարիա ցարեկ. 10, Վեցամս. 5 ֆր: ԿԱՆԻՏԻԿ: Արտասահման ցարեկ. 12, Վեցամս. 6 ֆր
Գրութիւնք ետ չեն տրուիր: Հասցէ DIRAN PAPAZIAN YELDIZ TABIA, VARNA BULGARIE

Դ՝ ՏԱՐԵԾՐԶԱՆ

«Հայերի» ներկայ թուով կը թեակոխէ իր չորրորդ տարիշրջանը: Այս օրեր տարուան ընթացքին մէջ փորձառարար շատ բան սորվեցանք Պուլկարահայ կեանքէն, զորս ուրոյն յօդուածներու նիւթ ընել կը խոստանանք պարբերաբար:

Աս այժմ միութարական է մեզ ըսել, թէ որչափ մենք չը թերացանք մեր պարտականութեանց մէջ ու առիթը ներկայացաւ մեզ ձողկելու որչացած մոլութիւնները, այնքան և աւելի մեր շուրջը գտանք համակրանաց գործնական ցոյցեր, որոնցմով յաջողեցանք առանց փախցունելի մեր թերթը հրատարակել և հաճելի ընել զայն մեր ընթերցողներուն:

Մեր այս ըսածին դրական ապացոյցն այն է, որ մեր ընթերցողներէն մէկը կամ երկուքը միայն մինչև հիմա երևան եկած են իբր յամառութեան տիպարներ, որոնք տրգեղին տղիդ և կամ իրենց նմաններուն բարոյազօրէ ըսելնուս համար քէն ըրած և շարունակած են իրենց քէնը մինչև այսօր, մընացածներն ամենքն ալ համակրանք վերաբերուած են «Հայերի» և իրենց պարտականութեան անթերի կիրառութեամբ մինչև մէկ աստիճան ապահոված մեր թերթին գոյութիւնը:

Եղաւ ժամանակ, որ մենք դաստիարակի անուան անարժան վիթխարի պոռոտախօսի մը դիմակը վար առած ներկայացուցինք զանի իր իսկական տգեղութեան մէջ, ան առեն այդ սուտ սիրամարգը թափած չլլալով տակաւին իր ագասաւի փետուրները, ճգնեցաւ մեր շուրջը յարուցանել աղմուկներ, որոնք ճանճի վզտոցի պէս անցան ցացին մեր առջիկէն ապարդիւն և մեր ընթերցողները տեսան փորձնապէս այդ հրէշին շահատակութիւնները բարոյական աշխարհի մէջ...

Եղաւ ժամանակ, որ նոյնպէս դաստառու կոչուած բազոսային խումբի մը մէկ քանի տգեղ արարքը մատնանիչ ըրած ըլլալնուս համար ենթարկուեցանք խել մը «ըսի ըսաւ» ներու, զորս, խեղճ գինետան զաւակներ, կ'ուզէին լուծել գինետուններու մէջ սրօք և բրօք... ժամանակի ընթացքին մէջ տեսան մեր ընթերցողները այդ ալքօլի ծընունդներուն հէ ի հէ փախուստը հրապարակէ մը, ուր ալ ևս անտանելի դարձած էր կեանքը իրենց համար, եթէ մի քիչ կարմրելու երես ունէին...

Եղաւ ժամանակ և դժբաղդաբար միշտ կըլլայ այդ ժամանակը որ մենք առիթ կուենանք ձողկելու խաչագողներու բանակը, որ մանաւանդ արտասահմանի մէջ կը վիտայ այսօր ՀԱՅԻ համար: Սոսկադիք կալուօշներ,

որոնց ամենէն մեծ առաւելութիւնը իրենց վայրահաշուութեան մէջ կը կայանայ, կրթնած իրենց պաշտպան ու բաջալիրող պետերուն, ամեն նախատինք, ամեն հայհոյանք, ամեն ըստ պառնալիք ըրած են մեզ դադրեցնելու համար խաչագողներու դէմ մեր մղած կռիւը. սակայն մեր ընթերցողներ ուրախութեամբ տեսած են մեր անվեհեր ընթացքը եւ շնորհաւորած: Վառնայի կաթնօջը, թուրքի եւ մուրի արժանի այգ գծուած արարածը, չենք յուսար թէ իր պիտին շնորհաւորութեանը արժանացած ըլլայ ամենավերջին շահատակութեանը համար, որ հակառակ իրենց ցանկութեան արգիւնք մը չունեցաւ ու խաչագողները սկսան առաւել քան երբէք ճշմտաւ մեր խարազանին ներքեւ:

Տգեղ բարբերը հարուածել, ինչ պայմանի տակ որ գտնուին, աս եղած է ցարգ մեր Նշանաբանը ու աս պիտի ըլլայ մինչեւ վերջը:

ԱՉԳԱՅԻՅԵ

(ԱՅՍՕՐՈՒԱՆ ԹՂԹԱՐԵՐ)

Մանչեսթր բնակող Ակնեցի Տիար Աւետիս Ժամկոչեան յանձն առեր է տարեկան 75 ոսկիի գումար մը՝ չորս տարի շարունակաբար վճարել Ակնայ որբանոցին համար: Կ. Պոլիս բնակող Ակնեցի մէկ քանի վաճառականներ ալ խոստացեր են 20 տկան ոսկի նուիրել Ակնայ կարօտեալներուն ի նպաստ:

— Գերմանիոյ Շթուլկարթ քաղաքին մէջ գերմանական ընկերութեան մը կողմէ հաստատուած որբանոցին տնօրէն Պ. Պլօք գրած է Պատրիարքարան թէ նոյն որբանոցին մէջ պատուարուած որբերէն վեցը՝ իրենց ծննդավայրը դառնալու փափագ յայտնած ըլլալով, ի մօտոյ ճամբայ պիտի հանէ Պոլիս վերա-

դառնալու և Պատրիարքարանի յանձնուելու համար: Պատրիարքարանէն գրուեր է որ անմիջապէս ճամբայ հանուին անոնք և Պոլիս հասնելու օրերնին հեռագրով մը ծանուցուի, որպէս զի Պատրիարքարանէ մարդ զրկուի Սիրքէճիի կայարանը՝ զանոնք ընդունելու համար: Նոյնպէս Պ. Պլօքէ խնդրուեր է որ տեղեկագրով մը յայտնէ այդ որբերուն ունեցած կարողութիւնը կրթական և բարոյական տեսակէտով:

— Իզմիրի առաջնորդ Տ. Մելքիսէղի՝ Սրբալան յանձն առեր է իր անձնականէն հոգալ իր ծննդավայրի (Ռուսիոյ Շամշաթին գաւառի Ճավուշ գիւղի) եկեղեցիին նորոգութեան համար պէտք եղած 150 ոսկիի գումարը, ըստ որում զիւղացիք Ն. Սրբաշնութեան շիմնով, եկեղեցիին խարխուլ վիճակը յայտնած ու զայն նորոգելու միջոց մը խնդրած են եղեր:

— Աւստրիոյ Թուրքի գործարանները խօսք մէկ ընելով Թուրքի գինը հետզհետէ կը բարձրացնեն, այս պատճառով թէ Պուլլարիա և թէ Տաճկաստան թուրքի նեղութիւն կայ: Պոլսոյ Սէրփիթլու գիւղը ստիպուեր է թերթին գինը բարձրացնել:

Ն Ա Մ Ա Կ Ի Մ Բ Ա Գ Ր Ո Ի Ի Ե Ա Ն

22 փետր. 1900 փ. Պոլիս

Դարձեալ անօթութիւն եւ սով:

Աղգ. Պատրիարքարանը տեղւոյս Թաղ-Խորհուրդին ուղարկած է մեր սովամահ եղբայրներու օգնութեան համար շրջաբերական մը. յորում ի միջի այլոց կըսէ «Գաւառներու մէջ կսկսի վերստին կարօտութեան եւ քաղցի տագնապն եւ սաստիկ որբան չէր թերեւս անցեալ ձմեռ: Վանայ, Բաղէշի, Մշոյ, Բըշիի, Տիվրիկի, Ակնայ, Ուլնիոյ եւ այլ Առաջնորդարաններէն հասած տեղեկագրեր եւ հեռագրեր կը գուժեն մօտալուտ նշան: Ի Բա՛

դէշ Ախլաթ գաւառակի քսանի չափ հայա-
բնակ գիւղերու մէջ կսկսին մեծնիլ անօթու-
թենէ, նոյնպէս եւ Վանայ Շատախ եւ Խի-
զան գաւառաց մէջ, ուրիշ զանազան տեղեր
ալ գիւղացի կարօտեալք չգտնալով սնունդ,
անօթութենէ հալածական կը թողուն իրենց
տունն ու տեղը եւ իրենց կիներով եւ տղա-
ներով կերթան մուրալու, բայց թէ ո՞ւր,
չգիտեն, միայն թէ կը կարծեն փախչիլ սո-
վատանջ մեռնելէ եւ յաներու մէջ կը զլտ-
նեն իրենց մահը: Կարելի՞ է ամենուստ բար-
ձրացող օգնութեան աղաղակներուն առջեւ
որք հոգիները կը ծնշեն, ունկնախից մնալ:
Ո՛չ, ո՛չ:

«Այս հաւատով կոչուին կրնենք վերստին
ձեր պթութեան զգացումներուն, ձեր եղբայ-
րական սիրոյն, եւ ողորմութիւն կը հայցեմք՝
ողորմութիւն, ճարահատ կարօտելոց համար»

Պատ. Թաղ. խորհուրդն ալ կը խնդրէ
իւր յայտարարութիւնով տեղւոյս բարեօրէն բո-
լոր ազգակիցներէն, որպէսզի իւրաքանչիւր
որ ձեռք կարկառէ մահուան դուռը հասած
մեր եղբայրներուն: Եւ որպէսզի հանգանա-
կութիւնը զիւրութեամբ կատարուի, մասնա-
խումբ մը ընտրուած է հետեւեալ անձերէ,
Տեառք Ե. Քիւրտեան. Թ. Մեսրոպովիչ. Յ.
Աղամեան. Պ. Աստարճեան. Գ. Թէվէթէլեան,
Խ. Կտիգով. Կ. Էզնեան. Մ. Շամտանճեան,
Մ. Պասմաճեան. Մ. Շիրինեան. Մ. Թովմաս-
եան. Յ. Մեսրոպովիչ: Օգնութեան պարտա-
կանութիւնը գէպի մեր սիրելի հայրենակից-
ներուն նոր չէ որ պիտի բացատրուի եւ հե-
տեւաբար զգալով մեր պարտականութիւնը
պէտք է ամենայն առատութեամբ օգնենք,
աչքի առաջ ունենալով որ մեր ըրածը ոչ թէ
պահանջուած է մենէ, եւ ոչ ալ ողորմութիւն
մ'է, այլ մեզ ստիպողը, մեր իսկ ազգային
պարտականութիւնն է:

Ս. ԴԻԼԲԵՐԵԱՆ

Ծանօթ Ոսկերիչ-Փորագրիչ Տ. Ներ-
սէս Խաչիկեան եւ Լեւոն Աճէմեան՝ «Հա-
յելի» չորրորդ տարեմուտին առթիւ
անոր նոր վերնագիրը փորագրելով նուի-
րած են մեզ: Շնորհակալութիւն:

 Տիար Արամ Աղթարեան ՚ի
Պուրթէշ. — 1898 հոկտեմբերէ մինչեւ
1899 սեպտ. վերջ «Հայելի» մէկ տա-
րեկան բաժնեգին 12 ֆրանք պարտ-
քերնիդ ալ ես հաճեցէք վճարել:

Կ'ԵՐԵՐԱՆ ԿՈՐ...

Արտասահմանի մէջ հրատարակուող
մէկ քանի թերթեր՝ դրամի չգոյութեան
պատճառաւ՝ կ'երերան կոր.

Ամսականը չառնող վարժապետներ
թաղ. խորհրդարաններու գոյ գոնելուն
առջին կ'երերան կոր.

Մանկանալու մօտ կարգ մը խա-
նութեաններ՝ քիչ մըն ալ ներս նետենք
ըսելով՝ կ'երերան կոր.

Առաւ զբամաքիտին 2-3 ամսուան
մէջ ուրին ջուրին վատնող մէկ քանի նոր
փեսաներ՝ աներով տունին առջին կ'ե-
րերան կոր.

«Ամենեւին առուտուր չունինք»
պողացող բազմաթիւ լալկաններ՝ իրի-
կունները գինետան քեցկեաններուն առ-
ջին ժամերով ուրախ զուարթ կ'երերան
կոր.

Բարեկենդանի կիրակի գիշերուան
պարահանդէսին մէջ՝ ունեցած կարճ
խնդրներն ու վտիտ քսակներն բոլորո-
վին վրայ տուողները՝ հիմա մտմտութե
պաշարուած՝ անդին ասդին կ'երերան
կոր.

Խաղալ չգիտցող չէրքէզադէմ դի-
մակաւորներ՝ պարահանդէսի տաք մի-
ջոցին տամաէն լքուելով, սալօնին մէջ-
տեղը բացը մնացած՝ եղէգի պէս կ'ե-
րերան կոր:

Բարեկամութեան սահմանին մէջ
մէկ քանիներու եղած փոխառութեան
գումարները՝ օդին մէջ կ'երերան կոր.

Բոժ. — Հիմակուան ժամանակս ին-
ծի պէս մուտքը ելքին չի կրնար հա-
ւասարեցնողները՝ ոտքի վրայ չէ՛ նստած
տեղերնին անգամ... խախամի պէս
կ'երերան կոր...



Ուշագրութիւն մեր նոր հաս-
ցէին:

Ծ Ի Ծ Ա Ղ

Պ Ա Ռ Ա Ի Ա Կ Ա Ն

ՀԱՏԵՆՏԻՐ ԱՍԱՑՈՒՄԻ

Տանաւկին կնիկը՝ պէշիկին տակը
պէլի կըլլայ:

Բոլանթի դայիկ

Բե՛ր պուճախը, դնեմ օճախը:

Պախըճի էպրոս

Բիսը՝ բիսը կը թէմզցունէ:

Հաճի Վարչախ

Էշն ինչ գիտէ մուշն ինչ է:

Տէնկօիկ Նուշիկ

Մենձ կեր, մենձ մի՛ խորաթեր:

Նալընլը Բրաբ

Աղջիկ քեզի կըսեմ, հարսնուկ դուն
լսէ:

Համանթաղ խաթուն

Մարդ մարդու հալէ չիյտէ, կէս
դիշերին ժամ՝ կը կանչէ:

Օղաբեր հալա

Խնլոտին ցուրտն է մահանայ:

Մարինոս տուտու

Գոճանա կէօրէ պաղլա պաշընը:

Ընող ըլլող Կիւլիւկ

Քէօր քէօրա ճըռթ աէմիշ:

Հաւկուր Մարթա

Չուլը չուլին հայտար կուտայ:

Եամալը Էրանիկ

Իր քէլութանը չի նայիր, ինձի
տաղ կըսէ:

Բէրուգալը Էլմոն

Էշը էշուն քով կապուս նէ եա առոց
կառնէ եա փառոց:

Խութսի տուտու

Ամեն մօր մար էն ըսեր, Աստուա-
ծամօր կիւճն է եկեր:

Էգսա մարապետ

Կատուն ունի հաց ու պանիր, գի-
շերը քունը չի տանիր:

Տըրտըն Հոռոր

Պիր տիրէմ էթ պին այըպ էօր-
թէր:

Հիշման Աննա

Էրիկ կնկան մէջ մահրլմա չի չոր-
նար:

Սուլֆի Ղաւթիկ

Աղւոր անոր կըսեմ քի՛ այնասը
դլոխ կը կապէ:

Եօմա Էլպիս

Կաթէն բերան էրեցաւ, եօղուրը
փշելով կը խմեմ:

Սողոմէ տու տու

Կուլ ըսածդ տախ պէս է, քանի ըս-
տկես՝ կ'ստկուի:

Ալուսիկի խաթուն

Աճէմի խաթունին ծառքը իյնողը
պիպէնի պէս կ'երի:

Խալփուլ Աճալիպ խաթուն

ԲՈԺՈԺԻԿԻ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆԸ



(Շար. եւ Վերջ)

Տնարք և տիկնայք,

Հիմա, աս պայմաննե-
րով ու. աս ընթացքով ան-
տարակոյս մօտ ատենէն ա-
զատութիւնը պիտի կրնանք
ողջունել. . . անգիրի աշ-
խարհքին մէջ, ուր արդէն
բազմած են Հայաստանի
մէջ ջարդուած 300,000-
ները, Պոլսոյ ութը տասը
հազարները և կարգ մը
մանր մունր զոհեր, որոնք
քեօջէ պուճախ տեղուանք



ըլլալուն համար Մայր-հաշիւին չեմ անցու-
ցած: Ու ասոր անպատճառ տեսնկ ըլլալիքը
հաստատելու համար համոզող ապացոյցներ
չեն պակսիր. զոր օրինակ, բիւրսին ջարդե-
լու ու կողպտելու համար ալէստա կայնած
ըլլալը. Եւրօպայի մեր խեղճութեանը վը-
րայ պըշըխ պուճիշ ընելով տուլղուտը
տուլղուտու խնդալու տրամադրութիւնը. իսկ
ամենէն աւելին է՝ այս ամենը առանց հա-
շիւի առնելու մեր ալա բէնտինէ և ալա բէյ-

Ֆինէ ատենը հիդ մը մէյմէկ մարիֆէթ փախ-
ցունելը և ներքին անվերջենալի եղբայ-
րասպան կոխները՝ որոնք արթնդ գտները
գոցեցին ու մեզի ալ ներսը ձգեցին: (շաճ
յաւ, շաճ յաւ): Պատմութիւնը պիտի ան-
մահացնէ անունը այս ամենուն սէրու սէպէպ
եղող պապա Նազարին, որ աւելի խաչագողո-
թիւնը հիմեց ու անոր զործնական ապա-
ցոյցը նախ ինքը տալով, իւզոտ կտորը ֆիլի պէս
կլեց: (Ուժգին ծափահարութիւն. աշխարհ-
ընդին սաստիկ ինք մը կը փչէ):

Տեարք և Տիկնայր, կը տեսնէք սր ա-
մառ ձմեռ զմեզ յանկարծակիի բերող հիւ-
սիսային սոսկալի հովը այս վայրկեանիս ալ
սկսաւ փշել ու պատկառելի Նէլ-տէյրմէնին՝
անօթութենէ դարձող մեր գլուխներուն պէս
սկսաւ շուտ շուտ դառնալ. զձեզ գէթ ցուր-
տին ու բուրբին դէմ՝ չի սպասցունելու համար
այսօրուան բանախօսութիւնս կը վերջացնեմ
խոստանալով ուրիշ ատեն աւելի երկար խո-
սելու. մինակ կառաքարկեմ որ մեկնած ա-
տեննիս, ի պատիւ խաչագողաց՝ հետեւեալ
խաչագողական մարջը միաբերան երգենք, ո-
րուն եղանակը յորինած է գերմանացի հըռ-
չակաւոր երաժիշտ անմահ հօֆման—Բիւֆ-
ման—Եղատման:

Օրհնեալ էք եւ օրհնեալ լերութ. ամէն:

(Երկարատեւ ծափահարութիւն կեդ-
րոնէն, աջէն. ձախէն, վարէն ու կերէն,
կեցցէ, պուսֆօ, փիփ, փիփք. բիւք):

ՄԱՐԾ ԽԱՉԱԳՈՂԱԿԱՆ

Օն անգր յառաջ,
Հո՛ւ պապամ հա՛,
Յառա՛ջ, յառա՛ջ,
Ատըմընը ա՛շ,
Մի ձախ մի յա՛ջ.
Հապօն յառա՛ջ,
Սաղտան սօղտան
Չըբբարագ գա՛շ,
Խաչագողդ բա՛ջ:

ԴԻՄԱԿԱՐԱՇԽՈՒԹԻՒՆ

Պ. Բաժոժիկ՝ բարեկենդանի առթիւ
կարգ մը ծանօթ անձնաւորութեանց
մէջ մէկ դիմակ նուիրած էր, որպէս զի
անոնցմով դիմակաւորուին և բարեկեն-
դանը ուրախ զուարթ անցնեն: Աւասիկ
անոնց ցանկը.

Հնչակին—Հրեայ եռսալին դիմակը:

Մարտին—Ճիւղութեան ուխտին
հիմնադիր Իգնատիոս Լոյսլայի դիմակը:

Դրօշակին—Մեծ հաւատաքննիչ Պետ-
րոս Արպուէզի դիմակը:

Արմէնիային—Գանձանակ պտտցնող
Տէր պապաի դիմակը:

Լաւմէնիին—Տիպլումաթիքական ա-
ճէնթի դիմակը:

Նոր Կեանքին—Ճերմակ մաշերով
մանուկի դիմակ մը:

Անահիտին—Պչրող գրագիտահի մը
դիմակը:

Միութիւնին—Մեղած մասիկիս դի-
մակը:

Ձայն Հայրենեացին—Կրակոտ Եան-
քիի դիմակ մը:

Հայրենիքին—Կոյկօրճի դիմակ մը:

Արշալոյսին—Էսրարքէջ ֆէլլահի դի-
մակ մը:

Շարժումին—Շուարած Առաքեալի
դիմակ մը:

Իրաւունքին—Թէփէն ծակ տէրվիշի
մը դիմակը:

Հայելիին—Վհուկի մը դիմակը:

Պ. քաղաքի խաչագողներուն—Լէֆ-
թէր Մանօլի դիմակը:

Ոստիկանութեան պաշտօնեայ ժափե-
րին—Մութի մէջ պտտող աղուէսի դի-
մակ մը:

Միսիւ Թիւֆէնի ծայրեանին—Բթին
վրայ տեղաւորած ակնոցին վրայէն ծուռ
ծուռ թէքէ կէօզ նայուածք մը ունեցողի
դիմակը, ֆիլան:

Ս. Գիւլանին — Էմսալսըզ հրէշի մը գիմակը:

Մեր վարժարանի անօրէնին — Դուն ալ իրաւունք ունիս դուն ալ, ըսող խաթրչինասի գիմակ մը:

Թաղական եղողներուն — Քսակիդամբողջութիւնը պարպել տալ ուզող անկուշտի գիմակը:

Հոգի վառող խլավուզներուն — Սադայէլի գիմակը:

Անօթիներուն — Շատ ուտելէ յարփրացածի գիմակը:

Տարիքոտ մնայականեան օրիորդներուն — 16 տարեկան աղջկան գիմակը:

Տարիքոտ երիտասարդ յօճուֆներուն — 16 տարեկան պատանիի գիմակը:

65նոց պառաններուն — Նոր հարսի գիմակ, անոր հագուստովը, դէմքին երկերովը ու վրձիններովը միասին:

Սնանկանալու մօտ եղող խանութպաններուն — Օրերը համրուած յլի կնոջ կերպարանքն ու գիմակը:

Ընդհ. խաչագողներուն — Պանքային մէջ անսահման վարկ ունեցող գեր եւ անփոյթ վաճառականի գիմակը:

(Աստուած ամօթով չընէ):

Երկու պզտիկ տղաք

— Ծօ Միհրան, սա անցնող մասկէներուն մէջ «Փալ պագար, բագլա տէօքէր» ըսող էխտիյար ֆալճիի կնիկ եղողը ո՞վ է:

— Ես ի՞նչ գիտնամ:

— Ես գիտեմ. մեր օրիորդն է:

— Ինչէ՞ն գիտցար:

— Նայէ՛, մայրիկին թիւյէրը թափած հին քիւրքը հագեր է:

— Էյ պէլքի ան չէ:

— Ան է, ան է, տէմին քովէն անցած ատենս՝ «ծօ Լեոն, խելօք կը կենան կոր» ըսաւ:

Երկու սահակներ

Նիկօ՛ւ, եթէ այդչափ նեղ կացութեան մէջ ես, ինչո՞ւ չես ծախեր ժամացոյցիդ այդ գեղեցիկ շղթան:

— Օհ, չատ կը սիրեմ զայն, ընտանեկան յիշատակ մըն է:

— Ահ...

— Ինչո՞ւ կը զարմանաս, մեծ մօրմէս գողցայ:

Ն Կ Ա Ր Հ Ա Ն Ո Ի Կ



Ծեծ տըվ



1 Լ Ն յն

Առաջին անսխալ կարգացողին նուէրն է կատակերգութիւն մը:

Թիւ 150 «Հայերի» Նկարհանուկը կարգալ այսպէս:

«Խաչագողութեան մը վրան գոցել փութալը մեծ վատութիւն է»:

Գոր անսխալ կարգացին հետեւեալ կարգաւ, Տ. Գարապաճագեան. Թիւ 1181 Չրդ Ուչասթ. եւ Յ. Էնկիպարեան Վառնայէն. Յ. Ժամակոչեան եւ Վ. Հաֆնուրի Շուվայէն. Գ. Ն. Քէստանեան Ռուսճուգէն. Կ. Յ. Միւնասեան Օսման բաղարէն. Օր. Աննիկ Ա. Պէրպէրեան եւ Ն. Համբերեան Սօֆիաէն:

Մ Ո Ւ Ի Է Ռ ԲՈՒՆԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն)

Տօռ. — Ամենեւին, ես միշտ նոյն աչքով կը նայիմ քեզի, և պէտք չէ որ վրդովիս այս ամուսնութեան համար. սիրելուս չէ որ կառնեմ այդ մարդը, այլ ստակին համար. ես չունիմ ստակ, դուն ալ չունիս, ի՞նչ ընենք ասանկով, ես այս մարդը առի որպէս զի վեց ամիսէն դու ալ ստակ ունենաս ես ալ, կը հասկնամ դու ալ ստակ ունենաս ես ալ, վեց ամիսէն մեռած առ ինձմէ. (յանկարծ Ծէրուկը կը տեսնէ) Մերք ալ քու վրադ կը խօսէինք պարոն:

Ռուբ. — (Տօռիձային) Այս պարոնն է քսածդ:

Տօռ. — Հրամմեր էք:

Ռուբ. — (Ծերուկին) Հաճեցէք պարոն իմ շնորհակալութիւններս ընդունիլ ձեր ամուսնանալուն առթիւ, նաեւ իմ ամենախոնարհ ծառայութիւններս. իրաւոր շատ համեստ կնոջ մը կ'իյնաք կոր, (Տօռիձային) Եւ դուք օրիորդ, ուրախացէ՛ք ասանկ պարոն մը առնելուն համար. ասկէ ապէկ չ'պիտի գըտնէիք, պարոնին վրայէն կերակայ որ աղէկ ամուսին մ'է. (Ծերուկին) Այսուհետեւ ձեր բարեկամն եմ:

Տօռ. — Շնորհակալ ենք, հիմա երթանք. ետքը երկար բարակ կը տեսնուինք: (Կերթան)

Մեր. — (Մինակ) Ալ բոլորովին զգուեցայ կարգուելէն, կարծեմ գէշ չեմ ըներ թէ որ երթամ խօսքս ետ առնեմ. թող քիչ մը ստակս վրայ ելթայ և այս անձունի կապէն ազատիմ, երթամ աղջկան հայրը տեսնեմ: (Անդիմոսին դուռը կը չալէ):

Անդ. — (Պատուհանէն) Օ՜ փեսաս, դուն ես.

Մեր. — Ծառայ եմ պարոն:

Անդ. — Հարսնիքը ընելու համար եկար:

Մեր. — Ձէ՛, թողութիւն կընես:

Անդ. — Ես քեզմէ աւելի կուզեմ որ ժամ մը առաջ ըլլայ:

— Մեր. — Ես ուրիշ բանի համար եկայ:

— Անդ. — Արդէն ամեն բան պատրաստ է:

Մեր. — Խնդիրը ատոր վրայ չէ:

Անդ. — Աղջիկս հագուած սգուած քեզի կ'սպասէ:

Մեր. — Ես ատոր համար չեկայ:

Անդ. — Շատ գոհ պիտի մնաս. ուրտի շուտով ներս հրամմէ:

Մեր. — Ձեզի պատիկ խօսք մը ունիմ:

Անդ. — Շատ մի՛ կոտորուիր. ներս հրամմէ:

Մեր. — Ձէ՛, չէ՛, ձեզի խօսելիք ունիմ:

Անդ. — Խօսելիք մի՛. . . կեցիր որ գամ: (Տեսարան կու գայ):

Մեր. — Ըսելիքս սա է որ ես ձեր զաւակը ինծի կնութեան առնել ուզեցի, դուք ալ մէկ խօսքով հաճեցաք տալու. բայց մոմտացի որ ես իրեն համար քիչ մը աւելի տարիքոտ եմ, իր գործին չի պիտի գամ:

Անդ. — Ընդհակառակը. աղջիկս եւելօք հաւնած է ձեզի ու աղէկ պիտեմ որ ձեզմով միայն երջանիկ պիտի ըլլայ:

Մեր. — Ձէ, պարոնս, չէ, ես մարմինս վրայ արտառոց բաներ ունիմ:

Անդ. — Աղջիկս բարեհամբոյր է. դուն ալ պիտի տեսնաս որ հետդ աղէկ պիտի վարուի:

Մեր. — Ես ո՛վ, ան ո՛վ. կարելի բան չէ:

Անդ. — Ատ ի՞նչ խօսք է.

Մեր. — Վերջին խօսքս ըսեմ քեզի. շատ աղէկ կընես թէոր աղջիկդ ինծի չի տաս:

Անդ. — Խնդրիդ եկաւ, փեսայ, ես կը մեռնիմ, խօսքս ետ չեմ առներ:

Մեր. — Տէր ողորմեա, մեռնելու ի՞նչ կայ:

Անդ. — Ես աղջիկս քեզմէ զատ ուրիշին չեմ ուզեր տալ:

Մեր. — Շատ շնորհակալ եմ ձեր այդ համակրանքէն, բայց բացարձակ կը զըրուցեմ որ չեմ ուզեր կարգուիլ:

Անդ. — Ո՛վ, դուն. բայց նայէ՛, քեզի բան մը ըսեմ, պարոն, կամքերը ազատ են. ես ամենեւին մարդէ չեմ վախնար. դուն ինծի հաստատ խօսք տուիր:

աղջիկս առնելու, ես ալ հաճութիւն տը-
ւի ու ամեն բան պատրաստուեցաւ. հի-
մա որ խօսքդ ետ առնել կ'ուզես, եր-
թամ նայիմ թէ ի՞նչ պէտք է ընել:

(Կերթայ)

Ծեր. — (Մինակ) Շիտակը, չէի կար-
ծեր որ սոչափ դիւրութեամբ խօսքի
պառկի: Արդարեւ քանի կը մտածեմ:
կը տեսնեմ որ մեծ խելացութիւն է սա
գործին մէջէն սկիզբիւ. քիչ մնաց ա-
նանկ բան մը պիտի ընէի որ բոլոր
կեանքիս մէջ զղջայի. ահա տղան ալ
կուղայ կոր, պատասխանը բերելու:

ՏԵՍԻԼ Զ.

Ծերուն և Կոմիտաս

(Կոմիտաս ձեռքերը կտին՝ երկու սուր
բռնած է):

Կոմ. — (Մեղմորէն) Ծառայ եմ պա-
րոն:

Ծեր. — Եւ ես ձեր ծառան, պարոն:

Կոմ. — Հայրիկս ըսաւ որ տուած խօս-
քերնիդ ետ առեր էք. իրա՞ն է:

Ծեր. — Այո՛, պարոն. ցաւօք սրտի կը...

Կոմ. — Հոգ չէ. (Սուրբը ներկայացնե-
լով) հիմա դուք սա երկու սուրբերէն
մէկը ընտրեցէք:

Ծեր. — Սուրբերէն մէկը մի՛.

(Շար)

Մ. Զ.

ՀՈՎԱՍՏՈՒՆ

Սիրուն բանաստեղծութեանց հա-
տորիկ մըն է, ընթերցանութեան ար-
ժանի: Գինն է 25 սանդիւմ. շատ առնող-
ներու համար չափաւոր զեղչ: Դիմել
Զարպհանէլեան գրատուն Վառնա:



Հայկական սրճարան ճաշարան,
ընթերցարան, պիլարտօ, կլիկակ եւ
ընտիր սիկարնր: Հաստատութիւնս
բաց է ամեն օր առաւօտեան ժամը

5էն մինչև 2: Երրորդ Աշխիւ թիւ 388:

28րդ զոփոցին մօտիկ ի նիւ—Եօրք:

ԱԶԴ

Ներկայ 1900ի մէջ հրատարակուելիք
«Վարդանանց պատերազմը կամ Վասակ Սիւ-
նի և Վարդան Մամիկոնեան» բնական դոր-
ծին տպագրութեանը գիւրութիւն մը տուած
ՀԼԼալու համար այժմէն բաժանորդագրու-
թիւն մը բացուած է. փափաքողները թող
հաճին իրենց հասցենիւր ու բաժենգինը
(2 Փր.) յրկիւ հեղինակին հասցէին:

Երտաշէս Կարապետեան (բօսթ րէս-
թանգ) Շուշա:

Հրատարակութենէ վերջը սոյն գիրքը
պիտի ծախուի 2, 70 սանդիւմի:

—10

ՆՈՐ

Ա. Զ. Մ. Ա. Տ. ՈՒՆ

Կ. ԱԶՆԱՆՈՐԵԱՆԻ



Սագալը չէշմէ, աղջկանց կիւ-
նապիէի դէմը, Վարնա:

Ուկեղօծ, կաշեկազմ, լաթակազմ և
թղթակազմ եւրոպական ճաշակաւ:

Դիւրամատչելի գիներ: Կը պատրաստէ
նաեւ վաճառականական տոմարներ եւ
գալրտցական տետրակներ:

ՊԱՏՈՒՀԱՆԻՆ ՄՈՒՐՀԱԿԸ

Թատրերգութիւն 7 արարուած

ՏԻԳՐԱՆ ՄԱՆԱԳԵԱՆ

«Գալ Վահան» ողբերգութեան հան-
գուցեալ հեղինակին սցեն Բ. երկն ալ կը
յանձնարարուի բանասիրաց ուշադրութեանը:
Գինն է 1 Փրանք: Կեդրոնատեղին Վարնա,
Արեւելեան տպարան: Օննիկ Բարսեղեան:

Отговорникъ М. Скововъ
Печница „Взаимность“ — Варна